**Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-2-Հ1**
**11.09.2023Թ.ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-2 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Երևան «     » «     » 2023թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հասմիկ Հակոբյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մեգաօֆս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Նիկոլայ Այդինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2023թ սեպտեմբերի 11-ին կնքված N **ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-2** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետի 3-րդ ենթակետը՝ Կողմերը, փոխադարձ համաձայնությամբ, որոշեցին 4-րդ, 6-րդ, 7-րդ, 10-րդ, 11-րդ, 14-րդ և 18-րդ չափաբաժինների համար հաստատել նոր՝ փոփոխված տեխնիկական բնութագիրը համաձայն Հավելված 1-ի:

1.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 02.11.2023թ թիվ 1906-Ն որոշումը հաստատել Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման դիմաց վճարման ժամանակացույցը համաձայն Հավելված 2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

**2.1** Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև պարտավորությունների լրիվ կատարումը:

**2.2** Սույն համաձայնագրում չնշված Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ծառայությունների հանձնման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

**2.3** Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**2.4** Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի թիվ 1 և թիվ 2 հավելվածները համարվում են համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ԳՆՈՐԴ**

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2,
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011038461
ՀՎՀՀ 02698732

**Գլխավոր քարտուղար՝**

---------------------------------------- **Հ. Հակոբյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

HAKOBYAN HASMIK 5610800161
Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2023.11.24 16:51:45 +04'00'

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մեգաօֆիս» ՍՊԸ
Հասցեն՝ Փարաքար-Թաիրով Մայրաքաղաքային 200
Հեռ.՝ (+374) 91-300-533
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2050922061711001
ՀՎՀՀ 01264917

**Տնօրեն՝**

---------------------------------------- **Ն. Այդինյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

Digitally signed by AYDINYAN NIKOLAY 3714890866
Date: 2023.11.24 12:30:20 AMT

*Հավելված թիվ 1*

*«        » «        »  2023թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-2-Հ1 համաձայնագրի*

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

| Ծառայության | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատես-ված չափա-բաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ-ման (CPV) | անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
| **4** | 39111140/511 | աթոռներ-2 | Աշխատանքային աթոռ՝ Աշխատանքային աթոռ՝ ուսուցչի, ուսուցչանոցի և բոլոր դասասենյակների համար: Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև(30 x 15 x 2. 0 մմ), կամ կլոր(Ф 20 x 1.2 մմ) խողովակներից՝, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450 մմ, թիկնակի բարձրությունը հատակից 800մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385մմ (առնվազն), **նմուշը կցվում է /նկար-3/**: Թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ: թիկնակը և նստատեղը երեսպատված կլինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիկնակի վերևի հատվածում  և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք, **ըստ կցված նմուշի /նկար-1, նկար-2/**: Թիկնակի պաստառապատված մասի չափերն ըստ նկարների են 400մմx300մմ: Ոտքերի եզրեր(ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝  ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| **6** | 39121520/508 | գրապահարան ներ-1 | Քարտեզների համար սեկցիա՝ պատմության և աշխարհագրության դասասենյակների համար՝ Քարտեզների համար սեկցիան ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ ФSU-ից), արտաքին չափսերը՝ 1230x410x2000մմ (ԼxԽxԲ), հետնապատը պետք է լինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ФSU-ի գույնի: Այն ունի 400 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնք փակվում են 2 դռնով՝ յուրաքանչյուրը 4 ծխնիով: Դռները պետք է ունենան մետաղական բռնակներ: Դարակները պատրաստված կլինեն լամինացված 18մմ հաստության ФSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Քարտեզների համար սեկցիան ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 1210x380x100մմ (ԼxԽxԲ), որի  հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝  ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| 7 | 39292600/503 | ամբիոն | Ամբիոն՝ հանդիսությունների դահլիճի ամբիոնի չափսերն են՝ 600x500x1200մմ: Այն պետք է պատրաստված լինի 18 մմ հաստության լամինացված ΦՏU-ից): Ներսի հարթակի օգտագործվող մակերեսը՝ $10^{0}$-$20^{0}$ աստիճան թեքությամբ դեպի ներքև, վրան՝ վերևի մասում բաժակը հորիզոնական տեղադրելու տեղով կամ համապատասխան հարմարանք ամրացված, իսկ թեքահարթակի եզրով ամբողջ լայնությամբ ամրացվում է 40-50 մմ բարձրությամբ եզրակալված, նույն ΦՏU-ից դետալ: Թեքահարթակի դիմացի եզրից, ամենացածր դիքից 200-400մմ ներքև, ամբիոնի ներսի չափսով պետք է տեղադրվի 18մմ հաստության լամինացված ΦՏU-ից պատրաստված, հնարավոր ամբողջ խորությամբ աշխատանքային բաց դարակ: Աշխատանքային հարթության բոլոր եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը՝ 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 6մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| 10 | 39121360/502 | սեղան՝ ղեկավարի | Ղեկավարի սեղան՝ դիմադիրով՝ Բաղկացած է սեղանից, դիմադիրից և կցասեղանից: Սեղանի չափսերն են՝ 1800x900x780մմ (ԼxԵxԲ): Սեղանի, դիմադիրի և կցասեղանի երեսները պատրաստված են 36-40մմ հաստությամբ լամինացված բարձրորակ ΦՏU-ից): Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանն մի կողմում ունի միասնական փականով փակվող 4-6 դարակներ (չորսի դեպքում դարակների բարձրությունը ավելի հարմարավետ կլինի օգտագործման համար, դարակների քանակների հարցը ճշտել պատվիրատու հետ, որոնք բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա), բարձրորակ մետաղական բռնակներով: Սեղանն, դիմադիրը և կցասեղանը, լամինացված ΦՏU-ի ոտքերից բացի կարող են ունենալ նաև լրացուցիչ փայտյա ոտքեր, հաստությունը 90մմ: Դիմային մասը փակված է 1664x700մմ որակյալ, 18մմ հաստությամբ լամինացված ΦՏU-ով: Դիմադիրի չափերը 700x1000x740մմ (ԼxԵxԲ): Դիմադիրը ունի 2 ոտք և միջնորմ: Կցասեղանի չափսերն են՝ 600x800x650մմ (ԼxԵxԲ): Յուրաքանչյուր կողմում ունի ունի միասնական փականով փակվող 3 դարակներ, որոնք բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սալյասկա), բարձրորակ մետաղական բռնակներով: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| 11 | 39141260/505 | զգեստապահարաններ-1 | Զգեստապահարան՝ Զգեստապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ΦՏU-ից, արտաքին չափսերը՝ 820x450x2000մմ (ԼxԽxԲ):<br>Զգեստապահարանը վերևից ունի 400մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից ներքև, 82մմ<br>հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ձող՝ համապատասխան ամրացումներով:<br>Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18մմ հաստությամբ ΦՏU-ից: Դռներն ամրացվում են 3-ական ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-1.2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ΦՏU-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8մմ հաստությամբ: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800x420x100մմ (ԼxԽxԲ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

| | | | |
|---|---|---|---|
| 14 | 39141260/506 | զգեստապահարաններ-2 | Հանդերձարանի պահարան՝ Պահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ ФSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC), գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Պահարանի արտաքին չափսերը՝ 1608x400x1680մմ (LxԽxԲ): Հանդերձարանի պահարանը ունի 300x400x500մմ (LxԽxԲ) չափսերի (ներսի) 15 հատ կտրտված, իրարից առանձնացված, համարակալված, անհատական օգտագործման համար նախատեսված սեկցիաներ, որոնք փակվում են եզրերը մշակված մեկական բռնակով դռներով՝ յուրաքանչյուրը 2 ծխնիներով, դռնակները կարող են ունենալ նաև պարզ փականներ: Հանդերձարանի պահարանի հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ФSU-ի գույնի: Այն ողջ պարագծով պետք է ունենա ուղղանկյունաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 1500x380x100 մմ (LxԽxԲ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |
| 18 | 39141260/507 | զգեստապահարաններ-3 | Մանկական զգեստապահարան՝ Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պետք է պատրաստված լինի 18մմ հաստությամբ լամինացված ФSU-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հետնապատը պետք է լինի 4մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ФSU-ի գույնի: Աշխատանքային հարթության եզրերը պետք է հղկված ու մշակված լինեն, առջևի անկյունները կլորացվեն, կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1700x300x1600մմ (LxԽxԲ), 1600մմ բարձրությունից 1400մմ-ը պահարանի բարձրությունն է, իսկ 200մմ-ը՝ ոտքերի: Յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 320x300x1400մմ (LxԽxԲ)մմ: Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ պետք է նախատեսված լինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 320x300x200մմ (LxԽxԲ) տեղեր(բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում գլխարկների դարակի տակից պետք է ամրացված լինի մետաղական երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Բոլոր միացումներն կիրականացվեն թաքնված ամրակցումներով և անհրաժեշտության դեպքում պահարանը պետք է ամրացնել պատին, ամրացնելու ձևը և անհրաժեշտությունը համաձեյնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: Այն պետք է ունենա չորս առանձին փայտյա, կամ մետաղական 200 մմ բարձրությամբ ամուր ոտքեր, որոնք տեղադրվում են եզրերից 50մմ դեպի ներս: Ոտքերի հատակին հպվող հատվածի եզրերի տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 6-8մմ է:<br>Դռների գույները գերադասելի են, որ լինեն հետևյալ կերպ՝ աջ և ձախ կողմի եզրային դռնեը լինեն՝ նարնջագույն, աջ և ձախ կողմերից երկրորդ դռնեը լինեն՝ բաց կանաչ, իսկ մեջտեղինը՝ երկնագույն: Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: Երաշխիքային ժամկետը՝ 365 օր:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը՝ ±5%, գույները համաձայնեցնել պատվիրատուի և դպրոցի տնօրինության հետ: |

**ԳՆՈՐԴ**

------------------------------ Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

HAKOBYAN HASMIK 5610800161

Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2023.11.24 16:52:09 +04'00'

**ՎԱՃԱՌՈՂ**

------------------------------------ Ն. Այդինյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by AYDINYAN NIKOLAY 3714890866
Date: 2023.11.24 12:30:47 AMT

*Հավելված թիվ 2*

*«          » «          »  2023թ. կնքված*

*N ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/62-2-Հ1 համաձայնագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

*ՀՀ դրամ*

| Հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | **Անվանումը** | **Ապրանքի** | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ՝ , ըստ ամիսների, այդ թվում՝ | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | **Ընդամենը** |
| 4 | 39111140/511 | աթոռներ-2 | | | | | | | | | | | | 429600 | 429600 |
| 6 | 39121520/508 | գրապահարաններ-1 | | | | | | | | | | | | 1002630 | 1002630 |
| 7 | 39292600/503 | ամբիոն | | | | | | | | | | | | 71430 | 71430 |
| 9 | 39111220/503 | Բազկաթոռ՝ ղեկավարի | | | | | | | | | | | | 127680 | 127680 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 39121360/502 | սեղան՝ ղեկավարի | | | | | | | | | | | | 450630 | 450630 |
| 11 | 39141260/505 | զգեստապահարաններ-1 | | | | | | | | | | | | 405030 | 405030 |
| 14 | 39141260/506 | զգեստապահարաններ-2 | | | | | | | | | | | | 1359030 | 1359030 |
| 18 | 39141260/507 | զգեստապահարաններ-3 | | | | | | | | | | | | 539844 | 539844 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**

HAKOBYAN HASMIK 5610800161

Подписано цифровой подписью: HAKOBYAN HASMIK 5610800161
DN: c=AM, sn=•••••••••, givenName=••••••, serialNumber=5bdc672203a3, cn=HAKOBYAN HASMIK 5610800161
Дата: 2023.11.24 16:51:17 +04'00'

------------------------------------ **Հ. Հակոբյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

------------------------------------ **Ն. Այդինյան**

(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by AYDINYAN NIKOLAY 3714890866
Date: 2023.11.24 12:29:00 AMT